Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 3 (51), հոկտեմբեր, 133-141
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.3.133

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Պ. ՍԵՎԱԿԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում առաջին անգամ համակողմանիորեն քննության են առնվել գոյականական բառակապակցությունների ոճական-արտահայտչական հնարավորություններն ու գործառույթները Պարույր Սևակի չափածոյում: Սևակյան խոսքի համակարգում գոյականական բառակապակցությունները մեծավ մասամբ դադարում են լինել զուտ անվանական նշանակություն ունեցող շարահյուսական միավորներ. դրանք վերածվում են գեղարվեստական կարևոր միջոցների, որոնցով ամբողջանում և առարկայական է դառնում չափածոյի պատկերային համակարգը՝ ձեռք բերելով իմաստային բազմաշերտություն, հուզական լիցք և գաղափարական հագեցվածություն: Իսկ հեղինակի կողմից ստեղծված փոխաբերական, խորհրդանշական բառակապակցությունները նպաստում են նրա գեղագիտական սկզբունքների, գեղարվեստական խոսքի հոգեբանական հիմքերի ճիշտ ընկալմանը. ***ջերմ ձյուն, ե-րազների կտորտանք***, ***մսե շապիկ***, ***քաղցր լաց***, ***հավաքարար քամու ձեռք***, ***անծուխ հրդեհ*** և նմանատիպ արտահայտությունները փաստում են, որ գոյականական բառակապակցությունները Սևակի պոեզիայում պատկերաստեղծ հիմնական միջոցներից են:

Բանալի բառեր – *հեղինակային ոճ, գոյականական բառակապակցություն, գեղարվեստական պատկեր, փոխաբերություն, անձնավորում, խորհրդանիշ, մակդիր, նորակազմություն, հուզական լարվածություն*

Գոյականական բառակապակցությունների կիրառությունն առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ հենց գոյականը, ունենալով կոնկրետ, նյութական նշանակություն, դառնում է բանաստեղծական հյուսվածքի ողնաշարը, մտքի առարկայացման հիմնական միջոցը [Եզեկյան Լ., 2003; Մելքոնյան Ս., 1984]: Այս բառակապակցությունները իրենց բազմազան դրսևորումներով Սևակի չափածոյում ունեն ոչ միայն անվանողական, այլև գեղագիտական

* **Լուսինե Հովհաննիսյան** –ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի հայցորդ
Лусине Оганнисян – соискатель кафедры армянского языка ЕГУ
Lusine H. Hovhannisyan – PhD Student at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ lusine_hovhannisyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0009-0009-4253-5138

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.10.2026
Գրախոսվել է՝ 12.10.2026
Հաստատվել է՝ 22.10.2026
© The Author(s) 2026

գործառույթներ, դառնում են իմաստային խտության, հուզական լարումի, գաղափարական հնչեղության, գրողի խոսքի լեզվամտածողական կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներ [Աբեղյան Մ., 1965]:

1.Հաճախադեպ են գոյականական այն բառակապակցությունները, որոնց գերադաս անդամը **գրական-համագործածական** բառաշերտին է պատկանում: Ամենասովորական, չեզոք բառերը կապակցության մեջ՝ նոր բառամիջավայրում, կենդանանում են, նպաստում նյութական իրականության գեղարվեստական ընկալմանը: Այսպես՝ «Պարապություն» բանաստեղծության մեջ **ձի** չեզոք բառը, հատուկ ընտրված լրացումների հետ զուգորդվելով, գեղարվեստական ցնցող պատկերի հիմք է դարձել.

Բեռնամեքենայի թափքում՝ **ձիե՛ր,**
***Վախից կծի՛կ դարձած, դողդողացո՛ղ* ձիեր,**
Ամեն շրջադարձի ու կեռմանի վրա
Մե՛զ պես (մարդո՛ւ նման) ճկվո՛ղ-թեքվո՛ղ,
***Մե՛զ պես (և ավելի՛) զգուշացո՛ղ* ձիեր**[1]**…**(II, 42)

Ինչպես երևում է, չեզոք բառերը շարահյուսական մակարդակում ճկուն են, ունեն բովանդակությունը և հեղինակի կամային վերաբերմունքը համադրելու ներուժ, իսկ հականիշներով արտահայտված լրացումները պատկերին խորքային իմաստ են հաղորդել [Առաքելյան Վ., 1958]: Գոյականական բառակապակցություններում գոյականը և նրա լրացումը կամ լրացումները իրենց արտահայտած իմաստներով ներգործում են միմյանց վրա. բառերի անվանողական իմաստին գումարվում է նաև իրադրաիմաստը, որի արդյունքում խտանում է բանաստեղծական խոսքը: Այսպես՝

Կոկորդիս մեջ դեռ կռվում է ***խեղդիչ* ծուխը *սուր* վառոդի**
Քո ***սեփական* բուրմունքի՛** հետ… (I, 51)
Ե՛ս, որ կարող եմ ինքըս ինձ կոչել
***Եկած* ապագա,**
Ես նաև ***քայլող* հիշողություն** եմ՝
***Ապրո՛ղ* պատմություն:** (I, 442)

«Դիմակահանդեսի գլխավորը» բանաստեղծության մեջ գոյականական բառակապակցությունները խոսքային նոր միջավայրում՝ ամենասովորական բառերի կողքին, խորացնում են հոգեկան տագնապի զգացողությունը.

***Բարոյական* այն պարապը,**
Որ շատ վաղուց
Ամենքիս մեջ հորանջում էր
Կարծես անչար և անվնաս,
Հիմա արդեն չարչարում է ու տանջում է՝
Վերածվելով մի ***անհատնում* զկռտոցի…** (II, 57-58)

---

[1] **Սևակ Պ.,** Երկերի ժողովածու 6 հատորով, «Հայաստան» հրատ., Եր. , 1972, հատոր 2, էջ 42 (այսուհետ բոլոր օրինակների հղումները կտրվեն փակագծերում՝ նշելով համապատասխան հատորն ու էջը):

«Իրերի դատն ու դատաստանը» բանաստեղծության մեջ Սևակը սթափության կոչ է անում մարդուն, հնչեցնում անողոք դատավճիռներ՝ գեղարվեստական խոսքի առանցք դարձնելով համագործածական բառեր՝ գոյականներ՝ իրաղրական նոր նշանակություններով.

Սա՛, որ **ծառա** է
Եվ պարտավոր է ծառայել մեզ միշտ,
Մեզ է դարձրել իր ***անարգ*** **ծառան** ,
Սա՛, որ **ծառա** է ու դարձել է **տե՛ր,**
Կղատվի իբրև… ***չար*** **ապստամբի**՝
Այսի՛նչ **Օրենքի** ***Այնինչ*** **Հոդվածով:** (II, 67)

Մարդուն աթոռավարակից զերծ պահելու ակնկալիքով գրողը դարձյալ զուգորդում է բառեր և բառակապակցություններ՝ վերաիմաստավորելով ասելիքը.

Ով նստեց Աթոռի վրա
(Կամ՝ այլ կերպ ասած՝ գրավեց Աթոռ,
Կամ՝ արժանացավ ***բարձր*** **Աթոռի),**
Օրենքի ուժով պարտավոր է նա
Հիշել, որ ինքը **երկոտանի է,**
Այն էլ՝ ***բարձրագույն*** … (II, 68)

Մարդկային կեղծիքը պատռելու համար վերոնշյալ բանաստեղծության մեջ գրողը հաճախ է սովորական բառը դարձնում հեգնանքի միջոց.

Ուրեմըն դեմ եք մեր…**Դատարանի՛ն**
Մեր ***Արդարադա՛տ,***
Նաև ***Անկաշա՛ռ,***
Նաև ***Հարազա՛տ,***
Ժողովրդակա՛ն մեր **Դատարանին…**(II, 69)

Ինչպես նկատելի է, Սևակը հասարակ անունները միտումնավոր գրում է մեծատառով՝ դրանց հաղորդելով խորհրդանշական իմաստ. անձնավորված բառերը ընդլայնում են ենթատեքստային ազատության տարածքը: Խոսքն առավել ազդեցիկ դարձնելու և հեգնանքը զորացնելու նպատակով Սևակը նաև **մասնատել** է կառույցը՝ բազմակի որոշիչները վերածելով առանձին նախադասությունների [Պապոյան Ա., 1970:26]:

Մարդու ներաշխարհի և իրականության բախման գեղարվեստական արտահայտություն է «Տաքսիների հանգրվանում» բանաստեղծությունը, որտեղ Սևակի պակերավոր մտածողությունը կատարյալ դրսևորումներ ունի՝ անձնավորում, փոխաբերություն, խորհրդանշան, մակդիր՝ գոյականական բառակապակցության առանցքում. սրանք ապահովում են իմաստային բազմաշերտություն.

Մեզն է մեկնում արձակուրդի:
Հավաքարար քամու **ձեռքով**
Ավելվում է ***գիշերային երազների*** **կտորտանքը**:

Ժամանում է օրը՝ իբրև վերաքննիչ:
***Տարագրված* տագնապներն** են վերադառնում
Ու ծեծում են ***արդարության փակ* դռները**… (II, 183)

Այստեղ կա հակադրություն՝ **գիշեր-օր.** գիշերը մարդուն երազելու հնարավորություն է տալիս, բայց ***հավաքարար* քամու ձեռքով** մաքրվում է ***գիշերային երազների* կտորտանքը**. տեղ է բացվում օրվա համար. մարդը կրկին առերեսվում է իրականությանը՝ ***արդարության փակ* դռներին**, ***տարագրված* տագնապներին,** որոնք խորհրդանշում են քնարական հերոսի հոգեկան ծանր ապրումները:

2.Գոյականական բառակապակցությունների ոճական գունավորումը ընդգծվում է, երբ զուգորդվում են **չեզոք ու գնահատողական** իմաստ ունեցող բառերը.

Տիկնայք *փափկասուն, զգյալ ու զգվյալ,*
***խորդենու նման տնաբույս* կույսեր**
նահատակվեցին անապատներում
և՛ արմատախիլ, և՛ բնակոտոր,
փլատակվեցին քարափներն ի վար… (IV, 291-292)

Ընդգծված կապակցությունները պատմական ծանրագույն ճակատագրի գեղարվեստական արտահայտություն են: Կամ՝

Սիրուհիս դարձավ **խոհեմությունը՝**
Գոկլիկ ու առկլիկ,
Մի՛շտ շրջահայաց,
***Ամե՛ն ինչ կշռող* խոհեմությունը…**(I, 444)

Զուգորդելով անզուգորդելին՝ Սևակը բացահայտում է բառի ու պատկերի անտեսանելի նրբերանգներ [Պապոյան Ա., 1970]:

«Զղջում եմ» բանաստեղծության հետևյալ հատվածում քնարական հերոսի ներքին երկխոսությունը հակադրական հիմք ունի. պատկերի իմաստային ծանրության կենտրոնը ընդգծված գոյականական բառակապակցություններն են, որոնցում կողք կողքի են դրվել ոճականորեն չեզոք ու նշույթավոր բառեր՝ ստեղծելով լեզվական անսովոր միջավայր: Խոսքի դրամատիզմը ընդգծում են ***ճաշակած մայրական* զգվանք-կարոտի լեղի, մարմնական հանգիստ-հոգու խռովք, քույր-արնոտ կառափնատեղի, մորթել** այնտեղ **մեղանչման ու զղջման *անագորույն* սրով** հակադրությունները: Այսպես՝

Ճաշակած մայրական* զգվանքի** հետ՝ ***կարոտիդ լեղին,
***Մարմնական* հանգստի** հետ՝ ***հոգու* խռովք,**
Թույլ տուր այսօր, քույր իմ, դարձնել քեզ ***արնոտ* կառափնատեղի,**
Եվ ինձ մորթել այնտեղ ***մեղանչման ու զղջման անագորույն* սրով…** (VI, 14)

3. Ոճական մեծ լիցքով առանձնանում են կազմությամբ **բարդ** գոյականներով բաղադրված բառակապակցությունները: Բարդ բառի բաղադրիչների իմաստային զանազան հարաբերությունները պատկերի գաղափար են ծնում.

Մահիկահոնք, արևաչյա,-

***Մի ըզգլխիչ* սիրավաճառ՝**
Դեմքով բարի, իսկ սիրտը չար...(IV, 155)

Պատկերի առանցքում **մահիկահոնք, արևաչյա, սիրավաճառ** նորակազմություններն են, որոնք համատեղում են ոչ միայն հույզ ու զգացմունք, այլև վերաբերմունք դրանց նկատմամբ: Խոսքի զգացմունքայնությունը ընդգծվում է նաև, երբ գոյականական բառակապակցության միայն ստորադաս անդամն է արտահայտված լինում նորակազմությամբ.

Ու կմնա միշտ **լույս *զվարթ***
Լույս՝ աչքերում հայ մանուկի,
Լույս՝ մտքի մեջ հայ պարմանու...
...Հայ այրերի ու հայ կանանց
Ջերմ* սրտերում *սիրատրրոփ: (IV, 236)

Հաճախադեպ են **լույս** արմատով բաղադրված նորակազմությունները բառակապակցության ստորադաս եզրում.

Լույսը մի՛ վառիր.
Բացված ծնկներիդ ***լուսամփոփային* ճերմակությունն** էլ
Մեզ համար շա՛տ է: (II, 182)

Ներկայացնենք մեկ այլ օրինակ «Անծանոթներ ենք մենք իրար» բանաստեղծությունից.

...Ես չեմ տեսնում դեմքիդ վրա
Քո ***ժպիտը*** այն ***լուսերից,***
Որով գիտես դու ողջունել
Ծանոթներին քո ***բախտավոր...*** (I, 145)

Նոր բառերը փոխում են մտքի արտահայտման երանգը, իսկ սա ազդում է բովանդակության ընկալման վրա [Պողոսյան Պ., 1990]:

«Նյարդի թրթիռը» բանաստեղծության մեջ գոյականական բառակապակցությունների ընտրությունը ունի հոգեբանական ուղղվածություն. հակադրվում են կյանքը, տվյալ դեպքում գարունը՝ իր կանչող ուժով, և քնարական հերոսը՝ իր նյարդային հոգեվիճակով:

Նորից են զանգում
***(Ո՛րերորդ* անգամ**),
Զանգում են... ***գարնան* դեսպանատնից**.
***Օտարսիրային* անձնագիր** են ինձ նրանք խոստանում:
Իզո՛ւր:
Չե՛մ գնա: (II, 181)

Բանաստեղծության հիմնական տրամադրության կենտրոնը հենց վերնագիրն է՝ ***նյարդի* թրթիռը:**

Գոյական+գոյական կաղապարով կազմված այս բառակապակցությունը իմաստային մեծ բեռ է կրում. **նյարդ** բառի ընտրությունը հուշում է, որ քնարական հերոսի սիրտը հիվանդ է **կարեվեր սիրով,** իսկ **թրթիռ** բառը սաստկաց-

նում է հուզական լարվածությունը: Այս տրամադրությունը ավելի է խորացնում ***ո՛րերորդ* անգամ** բառակապակցությունը: Հաջորդիվ հոգու դրամատիզմը ընդգծում են բառերի անսովոր համադրությամբ կազմված փոխաբերական բառակապակցությունները՝ ***գարնան* դեսպանատնից** և ***օտարսիրային* անձնագիր.** անձնավորված **գարունը օտարսիրային** անձնագիր է խոստանում: **Օտարսիրային** նորաբանությունը սիմվոլիկ իմաստ ունի. դա ընդունելը սեփական ինքնությունից հեռանալ է նշանակում քնարական հերոսի համար:

4. Սիրո և հիասթափության, սպասումի և կարոտի գեղարվեստական պատկերներում հաճախ առանցքային են **հակիմաստ** բառերի հարադրությամբ (**օքսիմորոն**) կազմված գոյականական բառակապակցությունները, որոնք սեղմում են խոսքը, այն դարձնում բազմաշերտ.

Ու ձյուն է գալիս,
Ինչ-որ ***ջե՛րմ*** մի **ձյուն.**
Հյուսիսն է հղում հարավին ողջույն:
Եվ ձյան մեջ ինչ-որ ***բուրմունք*** կա **գարնան...**(I, 290)

Գոյականական բառակապակցությունները դառնում են պատկերի հիմք, երբ հոգու դրամատիկ վիճակն է արտահայտվում .

Եվ տևում է այս ամենը
Անծայրածիր մի **պահ** գուցե,
Գուցե **շաբաթ** մի ***անսահման***
Կամ թերևս մի ***կարճ* տարի...** (II, 187)

Նկատելի է, որ վերոնշյալ օրինակում ընդգծված գոյականները բնութագրվում են իրենց իմաստներին անհամատեղելի լրացումներով, որը ստեղծում է խորքային հակադրություն:

Կամ՝

...Եվ քո ***տաքուկ* շնչից,** քո ***ներշնչած* սիրուց**
Աղբյուրներն են երգում նման ***քա՛ղցր* լացի:** (I, 18)

Անձնավորված բնությունը արձագանքում է հերոսի սրտի երգին, որը նման է ***քա՛ղցր* լացի.** հակիմաստ բառերի հարադրությունը սիրո տառապանքի գեղարվեստական արձանագրում է:

«Փրկարար թվաբանություն» բանաստեղծության հետևյալ հատվածում իմաստային առանցք է ***անծուխ* հրդեհ** արտահայտությունը, որը խորհրդանշում է մարդու հոգում եղած պայքարը.

…Եվ վերստին արծարծելով ***անծուխ* հրդեհ**:
Ամենակուլ այդ **հրդեհից** մենք չենք այրվի՝
Ազբեստի պես … (II, 194)

Այս պատկերին արտահայտչական մեծ ուժ և հուզական լարվածություն է հաղորդում ***ամենակուլ* հրդեհ** բառակապակցությունը. հրդեհ բառին վերագրված **ամենակուլ** չափազանցական մակդիրը ընդգծում է հրդեհի կործանարար ուժը, որը, սակայն, չի կարող կոտրել մարդու կամքը՝ **մենք չենք այրվի՝ *ազբեստի պես...*** Ստեղծվում է ներքին հակադրություն՝ **ամենակուլ հրդեհ** և **չենք**

այրվի: Ազբեստի պես համեմատությունը խորացնում է հոգու ամրության գաղափարը և դառնում իմաստային յուրատիպ հանգուցալուծում այս հատվածի համար:

Հեղինակը հաճախ նույն գոյականի վրա դնում է հականիշ լրացումներ՝ ծավալելով խոսքի իմաստային դաշտը.

Որովհետև
***Առողջ* աչքով** ես տեսնում եմ,
Իսկ ***կույր* աչքով**…մի՛շտ երազում… (II, 44)

5.Գոյականին վերագրելով **մակդիր** լրացումներ՝ Սևակն ամենատարբեր հոգեվիճակներն արտահայտում է գեղարվեստական ճշտությամբ: Անդադար պայքարում մարդը փորձում է փրկել իր էությունը.

Ա՛խ, ***փախստական*** իմ **էությունը** պետք է է՛տ բերել,
Մի կերպ է՛տ բերել, թեկուզ խաբելո՛վ,
Թե չէ ***դատարկված*** իմ **քարանձավում**
Ամայությունն է զկրտում անվերջ… (II, 44)

Սևակի սիրո հավատամքը գեղարվեստական կատարյալ արտահայտություն է ստացել «Երգ երգոց» պոեմի փոխաբերական հետևյալ պատկերում, որտեղ իրենց նշանակությամբ առանցքային են ***նեղլիկ* բառե շապիկ և *մսե* շապիկ** գոյականական բառակապակցությունները.

…Օ Սուլամի՛թա.
Քո ***բիլիական* անունն** եմ սիրում,
Սիրում եմ. այն էլ ***բիբլիակա՛ն* սիրով**,
Որ երբ իր ***նեղլիկ բառե* շապիկն** է աշխատում հագնել,
Թվում է հիմա հեթանոսակա՛ն՝
Նույնիսկ անպարկե՛շտ,
Բայց... նրա՛ աչքում,
Ում համար ***սիրո* սրբությունն** արդեն
Դարձել է **հագուստ *տոնակա՛ն օրվա,***
Մինչ նա իմ **միա՛կ շապիկն** է. ***մսե՛*** …(III, 143)

«Լույս զվարթ» բանաստեղծության մեջ **լույս** գոյականին վերագրելով դրական գունավորում ունեցող մակդիրներ՝ բանաստեղծը ուժեղացնում է լույսի սպասման զգացողությունը.

Լո՛ւյս, լո՛ւյս *զվարթ*,
Լո՛ւյս *զվա՛րթ ու գերազանցի՛կ*,
Լույս *երգեցի՛կ ու նվագո՛ւն:* (II, 11-12)

Սևակն հաճախ է նախընտրում **հարադրություններով** արտահայտված մակդիրները, որոնք շեշտում են բովանդակային նրբերանգներ.

*…**Խոցվա՛ծ-արյունո՛տ,***
Այրվո՛ղ-ապտակվա՛ծ,
***Ցավա՛ծ-ճչացո՛ղ,* Մանո՛ւկ հավատը**
Որ հայր դառնալու համար է ծնվել**:** (II, 8)

Բազմակի մակդիրները, ունենալով իմաստային զանազան առնչություններ, խորությամբ բացահայտում են մակադրյալ գոյականի իմաստը.

Նույն ***ժանիքավոր-գիշատիչ*** **քամին**՝
Հոշոտված **լճի** դիակը լքած,
Իր մագիլներն է խրում գլխիս մեջ,
Նաև թիկունքիս... (II, 8)

Հարադրություններով արտահայտված մակդիրներն իրենց գոյական մակադրյալի հետ իմաստային ավելի հարուստ երանգ և ժողովրդական լեզվամտածողության շունչ ունեն.

Եվ ***խելքամաղ ջահել*** **տղերք,**
Տղամարդիկ ***սիրակեղեք***
Իրենց ***մատնող-դավաճանող*** **աչքերն** ահա
Թարթիչների ***սուտլիկ-մուտլիկ*** **խաղով** կոծկում
Եվ թուլակամ շրթունքներն են բռնի կոճկում... (IV, 120)

Սևակի չափածոյին յուրահատուկ բույր են հաղորդում ոչ միայն ժողովրդական հարադրությունները, այլև, ինչպես երևում է օրինակներից, հեղինակային նորակազմություն-հարադրությունները՝ գոյականական բառակապակցության ստորադաս դիրքում.

Ամուր փակեցեք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց՝
Անգի՛ր-ինքնահո՛ս-հաշվեկշռվա՛ծ այն **աղոթքների…** (II, 7)

ЛУСИНЕ ОГАННИСЯН – ***Стилистическое значение именных словосочетаний в поэзии Паруйра Севака*****.–** В данной статье впервые всесторонне исследуются стилистико-выразительные возможности и функции именных словосочетаний в поэзии Паруйра Севака. В системе поэтического языка Севака подобные словосочетания в большинстве своем перестают быть просто синтаксическими единицами, имеющими чисто номинальное значение; они превращаются в важные художественные средства, которые дополняют и делают осязаемой образную систему поэзии, обретая смысловую многослойность, эмоциональный подтекст и идейную насыщенность.

Созданные автором метафорические и символические словосочетания способствуют правильному восприятию его мироощущения, эстетических принципов и психологических основ художественной речи. Такие выражения, как «теплый снег», «обрывки снов», «плотская рубашка», «сладкий плач», «рука ветра-уборщика», «бездымный пожар» и тому подобные, доказывают, что именные словосочетания являются одним из основных образообразующих средств в поэзии Севака.

Ключевые слова: *авторский стиль, именное словосочетание, художественный образ, метафора, олицетворение, символ, эпитет, неологизм, эмоциональное напряжение*

LUSINE HOVHANNISYAN – ***The Stylistic Significance of Nominal Phrases in the Poetry of Paruyr Sevak*****.–** This article offers the first comprehensive study of the stylistic, expressive potential and functions of nominal phrases in the poetry of Paruyr Sevak. Within the system of Sevak's poetic vocabulary, the majority of these phrases cease to be merely syntactic units carrying a purely nominal meaning; instead, they transform into vital artistic devices that complement and render tangible the figurative system of his poetry, acquiring semantic layers, emotional undercurrents, and ideological depth.

The metaphorical and symbolic phrases created by the author contribute to an accurate perception of his worldview, aesthetic principles, and the psychological foundations of his artistic discourse. Expressions such as “warm snow,” “scraps of dreams,” “carnal shirt,” “sweet weeping,” “the hand of the sweeper-wind,” “smokeless fire,” and the like demonstrate that nominal phrases serve as key image-building devices in Sevak’s poetry.

Key words: *author’s style, nominal phrase, artistic image, metaphor, personification, symbol, epithet, neologism, emotional tension*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Օգտագործված գրականություն

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1965, 699 էջ:
Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. 1, ԳԱ հրատ., Եր., 1958, 466 էջ:
Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), ԵՊՀ հրատ., Եր., 1987, 368 էջ:
Եզեկյան Լ., Ոճագիտություն, ԵՊՀ հրատ., 2003, 376 էջ:
Եզեկյան Լ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատ., 2007, 402 էջ:
Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Լույս հրատ., 1984, 248 էջ:
Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Եր. համալսարանի հրատ., 1990, 424 էջ:
Պողոսյան Պ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատ., 1969, 253 էջ:
Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 1, Հայաստան հրատ., Եր., 1972, 526 էջ; հատոր 2, Եր., 1972, 472 էջ; հատոր 3, Եր., 1973, 344 էջ; հատոր 4, Եր., 1973, 326 էջ; հատոր 6, Եր., 1976, 448 էջ:
Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., Լույս հրատ., 1970, 322 էջ: